ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԻՐԱՐՓԻ ՌՈՒԲԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՇԱԿԱՆԻ ԲԱՌԱՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԺԳ.00.02 - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (հայոց լեզու)
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Մ. Խաչատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բ. Մ. Եսաջանյան

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Վ. Գալստյան

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. հունիսի 5-ին՝ ժամը 14^{00}–ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. մայիսի 5 -ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ մանկավարժական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ա. Հ.
Սվաջյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Ուսուցումը ոչ միայն գիտելիքների ձեռքբերման գործընթաց է, այլև կյանքի առաջընթացին ակտիվորեն մասնակցող անձի զարգացման և դաստիարակության միջոց: Հանրակրթության գերխնդիրը այնպիսի շրջանավարտի ձևավորումն ու զարգացումն է, ով պատրաստ կլինի ապահովելու իր երկրի գիտատեխնիկական ու պատմամշակութային առաջընթացը, կկարողանա հայտնաբերել, ձևավորել ու զարգացնել և հասարակայնորեն արդյունավետ ու նպատակահարմար կերպով կիրառել իր բոլոր բարձրարժեք ընդունակություններն ու ձիրքերը, ստեղծագործական արժեքները և ստեղծարար ներուժը, խորը բովանդակություն հաղորդել իր օգտակար գործունեությանը՝ ծառայեցնելով ինչպես հայրենիքին, այնպես էլ սեփական բարօրությանը:

Ժամանակակից գիտության բազմազան ոլորտների, մշակութային կյանքի, ազգամիջյան, հասարակական-քաղաքական հարաբերությունների տարաբնույթ զարգացումներն ազդում են լեզվական համակարգի կատարելագործման գործընթացի վրա, թելադրում նրա բառային կազմի հարստացման անհրաժեշտություն: Այս հարցում կարևորվում է ածականի ուսուցման դերը, որովհետև ածականով են բնորոշվում իրերը, երևույթներն ու հարաբերությունները (բազմակողմանի, հումանիստական, խաղաղասիրական, սպառազինային և այլն):

Անառարկելի է, որ պատկերավոր, դիպուկ, ճկուն ու դրական հույզերով օժտված հարուստ խոսքը մարդուն օգնում է կառուցողական հարաբերություններ ստեղծել թե՛ յուրայինների և թե՛ օտարների հետ, լուծել բազմաթիվ հիմնախնդիրներ, պաշտպանել իր և իր միջավայրի շահերը, հիմնավորել սեփական դիրքորոշումները, բանակցություններին հաղորդել դրական ելքեր ակնկալող լիցք:

Այս հայտարարությունների շրջանակով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի հետազոտության արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրության նյութ դարձնելով ածականի իմաստաբերականական հատկանիշների ուսումնասիրումը միջին դպրոցում՝ ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդների ու մեթոդական հնարների կիրառման ճանապարհով մշակել թեմայի արդյունավետությունը բարձրացնող մեթոդական ամբողջական համակարգ, որի կիրառումը կնպաստի ածական խոսքի մասի գործնական յուրացմանը, նյութի գիտակցական, առավել տրամաբանված ըմբռնմանը, սովորողների բազմաբնույթ մտածողության զարգացմանը, բառապաշարի՝ ածականներով հարստացմանը, գրավոր և բանավոր խոսք կառուցելու հմտությունների մշակմանը:

Հետազոտության օբյեկտը հիմնական դպրոցի սովորողների կողմից ածական անվան ըմբռնման, բազմաբնույթ մտածողության ձևավորման, բառապաշարի հարստացման գործում ունեցած նրա դերի գիտակցման, իմաստավորման և գնահատման համակարգն է:

Հետազոտության առարկան ածականանվան բառաքերականական կարգերի ուսուցման գործընթացն է միջին դպրոցում:

Հետազոտության գիտական վարկածը այն է, որ եթե՝

- որոշակիացվեն ածականի ուսումնասիրման ինչպես առարկայական, այնպես էլ հայեցակարգային մոտեցումները, գիտականորեն մշակվեն և գործադրվեն հայոց լեզվից աշակերտների գիտելիքները, հաղթահարվեն ուսուցման ավանդական գործընթացի կարծրատիպերը, ածականի ուսումնասիրման գործընթացը կազմակերպվի փոխներգործուն մեթոդներով, խարսխվի գործնականի վրա և կրի շարունակական բնույթ,

-ածականի ուսումնասիրման ընթացքում սովորողների բառապաշարի հարստացումն ու խոսքի զարգացումը դառնա գերխնդիր, և այդ միտումով ներդրվեն նոր տեխնոլոգիաներ իրենց նշանակետային դրույթների, մեթոդական խմբերի ուսուցման տեխնոլոգիական ու տեղեկատվական համապատասխան միջոցների միասնությամբ, ապա հնարավոր կդառնա ածականի արդյունավետ ուսուցումը ոչ միայն ընդհանրապես՝ որպես ուսումնական առարկայի առանձին թեմա, այլև կհարստանա սովորողների բառապաշարը, կզարգանա նրանց գրավոր ու բանավոր խոսքը՝ ապահովելով ոչ միայն հանրակրթական մյուս առարկաների յուրացումը, այլև հասարակական կյանքին գիտակցական ակտիվությամբ մասնակցությունը, միջանձնային գործարար հարաբերությունների ձևավորումը:

Հետազոտության հիմնական նպատակի և վարկածի համաձայն առաջ են քաշվել հետևյալ **խնդիրները՝**

1. բացահայտել ածականների տեղն ու դերը միջին դասարանների աշակերտների խոսքում,
2. մշակել և փորձարկել ուսուցման նոր եղանակներ՝ որոշելու ածականի դերը տարբեր խոսքի մասերի համակարգում,
3. բացահայտել ածականի շարունակական ուսուցման փուլերը լեզվի տարբեր բաժիններն անցնելիս,
4. փորձարկել և դասակարգել ածականի ուսուցման այնպիսի արդյունավետ մեթոդներ, որոնք կնպաստեն այդ խոսքի մասի յուրացման գործընթացում սովորողների բառապաշարի հարստացմանը, բանավոր ու գրավոր խոսքի զարգացմանը,
5. սահմանել ածականի գործածությամբ կապակցված խոսք կառուցելու քայլերը՝ բառ-բառակապակցություն-նախադասություն-կապակցված խոսք շղթայում,
6. մշակել և փորձարկել թեմայի յուրացման արդյունավետությանը նպաստող վարժությունների համակարգ,
7. առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետության հավաստիությունն ստուգելու նպատակով անցկացնել գիտափորձեր հանրապետության տարբեր դպրոցներում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը բխում է հայոց լեզվի

քերականության և լեզվական կարողությունների ուսուցման այն սկզբունքային դրույթից, որի համաձայն դպրոցում լեզվի ուսուցումը դառնում է տեսականի և գործնականի վրա հիմնված կառուցողական գործընթաց:

Մեր առջև դրված խնդիրների լուծման համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել անցյալի և ներկայի առաջատար մանկավարժագետների (Յա. Կոմենսկի, Յու. Բաբանսկի, Ի. Վ. Լերներ, Ա. Բահաթրյան, Յու. Ամիրջանյան, Ա. Տեր-Գրիգորյան, Ջ. Գյուլամիրյան), հոգեբանների (Լ. Վիգոտսկի, Մ. Մազմանյան, Ա. Նալչաջյան), լեզվաբանների, հայոց լեզվի մեթոդիստների (Մ. Աբեղյան, Ս. Աբրահամյան, Գ. Ջահուկյան, Հ. Բարսեղյան, Ա. Ղարիբյան, Ս. Գյուլբուդաղյան) աշխատությունները, դիտարկվող քերականական երևույթի վերաբերյալ լեզվաբանության մեջ գոյություն ունեցող ընդունելի տեսակետները, ինչպես նաև հայոց լեզվի դասագրքերը (Ֆ. Խլղաթյան և Լ. Խաչատրյան, Հովհ. Բարսեղյան և Փ. Մեյթիխանյան), ծրագրերն ու չափորոշիչները, հայոց լեզվի առարկայական և ուսուցման ավանդական հայեցակարգը:

<u>Հետազոտության մեթոդները</u>: Հետազոտության մեթոդներն ընտրվել են մեր առջև դրված նպատակին, խնդիրներին ու գիտական վարկածին համապատասխան:

1. **Էմպիրիկ** մեթոդներ.

ա) **դիտում**, որի շնորհիվ կուտակվել են տվյալներ և փաստեր, որոնք հիմք են հանդիսացել միջին դպրոցի սովորողի գիտելիքներն ինքնուրույն ճանապարհով ձեռք բերելու, բանավոր ու գրավոր խոսքը զարգացնելու համար,

բ) **ուսումնական գործընթացի վերլուծություն**, որի ընթացքում հստակ ուսումնասիրվել են փորձարարական կրթօջախների նորմատիվ ակտերը, որտեղ արտացոլված են կրթական գործընթացի շարժընթացը, նրա գործառույթները, բովանդակությունը, էությունն ու կառուցվածքը՝ կապված խոսքի մասերի, մասնավորապես ածական անվան ուսուցման մեթոդիկայի հետ,

գ) **անկետավորում,** որի միջոցով բացահայտել ենք գիտափորձի մասնակցած յուրաքանչյուր դեռահասի տարիքը, հոգեբանությունը, մտածողության տեսակները, անհատական առանձնահատկությունները, ուսուցիչների անձնային և մասնագիտական որակները, պարզել ածականի ուսուցման ընթացքում խոսքի զարգացման և բառապաշարի հարստացման՝ նրանց կարողությունները,

դ) **մանկավարժական գիտափորձ**, որի միջոցով բացահայտել ենք և հիմնավորել ածականի ուսուցման ընթացքում մեր կողմից կիրառվող տեխնոլոգիաների հրատապությունը, արդյունավետությունն ու անհրաժեշտությունը:

2. **Տեսական հետազոտության և մանկավարժական առաջավոր փորձի վերլուծման ու ընդհանրացման** մեթոդներ. սրանց միջոցով բացահայտել ենք մանկավարժական երևույթների միջև գոյություն ունեցող կապերը, սոցիոլոգիական հետազոտությունների ընթացքում կիրառած մեթոդների արդյունավետությունը:

<u>Հետազոտության կազմակերպման հիմնական փուլերը</u>:

Հետազոտության առաջին փուլում (2003-2005) ուսումնասիրվել են հիմնախնդրին վերաբերող տեսական ու մեթոդական գրականություն, որոշակիացվել ու հստակեցվել են հետազոտության ուղղությունները: Դիտարկվել են ածականի ուսուցման տեղն ու դերը միջին դպրոցի, հայոց լեզվի քերականության ուսուցման համակարգում:

Հետազոտության երկրորդ փուլում (2006-2008) փորձարարական դպրոցներում անցկացրել ենք արձանագրող, ձևավորող և հավաստող գիտափորձեր: Նախատեսված փորձարարական դասարաններում փորձարկել ենք մեր կողմից մշակված առաջադրանքներն ու վարժությունները, գրավոր աշխատանքների միջոցով ստուգել դրանց արդյունավետությունը և ամփոփել արդյունքները:

Հստակեցրել ենք այն մեթոդներն ու հնարները, որոնք կարող են նպաստել ածականի ուսուցման արդյունավետությանը:

Հետազոտության երրորդ փուլում (2009-2011) ամփոփել ենք մեր հետազոտության արդյունքները, համակարգել ատենախոսության թեմայի վերաբերյալ ձեռք բերած գիտատեսական դրույթները, մշակել ածականի ուսումնասիրման վերաբերյալ մեթոդական երաշխավորություններ, որոնք նպաստում են միջին դպրոցի աշակերտների բառապաշարի հարստացմանն ու պատկերավոր խոսքի զարգացմանը:

<u>Հետազոտության գիտական նորույթը:</u>

1. Փոխգործուն աշակերտակենտրոն մեթոդների կիրառմամբ բացահայտել ենք միջին դպրոցում ածական անվան ուսումնասիրման հնարավորությունները սովորողների բառապաշարի հարստացման և պատկերավոր խոսքի զարգացման գործում:

2. Նոր մոտեցումներ ենք մշակել ու ներդրել ածականի տեսակների, աստիճանակազմության յուրացման, նրա գործառական դերի բացահայտման և տարարժեքության ընկալման մեթոդական համակարգում:

3. Ածական անվան ուսուցման համակարգում ներդրվել և գործնական կիրառում է ստացել «պահանջների մանկավարժությունից դեպի փոխհարաբերությունների մանկավարժություն» դիդակտիկական սկզբունքը:

4. Մշակվել և փորձարկվել են ածական անվան ուսուցման ռազմավարություն և թեմայի ուսուցմանն ու ամրապնդմանը նպաստող վարժությունների համակարգ:

<u>Ուսումնասիրության տեսական նշանակությունը:</u> Հիմնական դպրոցում դասավանդվող հայոց լեզվի ուսուցման մեթոդիկան դիտարկում ենք որպես պատմական ըմբռնում՝ այդ համատեքստում քննելով ածականի ուսուցման հիմնախնդիրները, մշակելով դրանց լուծման մեթոդիկան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լեզվի պատմական զարգացման ընթացքում տեղի են ունեցել բառերի ձևաբանական իմաստների ու արժեքների տեղաշարժեր, նրանց շարահյուսական կիրառության հիման վրա խոսքիմասային փոխանցումներ՝ ածականի ուսուցման ընթացքում կարևորել ենք անդրադարձը ածական//մակբայ և ածական//գոյական տարարժեքությանը: Այդ կարգի բառերի դիտարկումը և քերականական իրողության ուսումնասիրությունը կարող են ամբողջացնել հատկանշային խոսքի մասերի տարարժեքության գիտական նկարագրությունը:

Առաջարկվել են հնարներ՝ քննարկվող լեզվական նյութի գիտակցական յուրացման, բառապաշարի հարստացման, պատկերավոր խոսքի զարգացման, աշակերտների մեջ մայրենի լեզվի նկատմամբ սիրո, հետաքրքրության ու հոգատարության ապահովության համար, ինչպես նաև ապահովվել են մայրենին անաղարտ պահելու գիտամանկավարժական հիմքերը:

<u>Ուսումնասիրության գործնական նշանակությունը</u>: Ատենախոսությունը պարունակում է որոշակի նյութեր, կողմնորոշող պահանջներ, որոնք կարող են օգտակար լինել հանրակրթական դպրոցի հայոց լեզվի ուսուցիչների, հանրապետության բուհերի բանասիրական ֆակուլտետի ուսանողների, ինչպես նաև բուհերում հայոց լեզվի մեթոդիկայի տեսական ու գործնական պարապմունքներ վարող դասախոսների համար: Հետազոտության հավաստիությունն ապահովված է հիմնախնդրի վերաբերյալ տեսական ու մեթոդաբանական ուսումնասիրությամբ, գործնական տարաբնույթ առաջադրանքների փորձաքննության արդյունքներով և այդ առնչությամբ առկա տեղեկություններով:

Ուսումնասիրել ենք հայ և ռուս լեզվաբանների, մեթոդիստների, հոգեբանների, առաջավոր ուսուցիչների դիրքորոշումները՝ մեզ հետաքրքրող հարցերի վերաբերյալ, վերլուծել ենք դասավանդման փորձը լուսաբանող հոդվածները, կատարել նպատակային դասալսումներ, վերոհիշյալ դպրոցների ուսուցիչների առջև հանդես եկել թեմայի հանգուցային դրույթների մեկնաբանությամբ:

<u>Հետազոտության արդյունքների հավաստիությունն</u> ապահովել են.

- մեր ընտրած հայեցակարգային դիրքորոշումների մեթոդաբանական հիմնավորվածությունը,
- տեսականի և գործնականի միասնությամբ իրականացված հետազոտության առաջադիր խնդիրների արդյունավետ լուծումն ու համալիր մեթոդների կիրառումը,
- մեր կողմից մշակված ու ներդրված մեթոդիկայի արդյունավետությունը, հուսալիությունը, հետազոտության առջև դրված նպատակի ու խնդիրների, գիտական վարկածի և պաշտպանության ներկայացված դրույթների միասնությունը:

Այն հիմնավորված է նաև մեր կողմից առաջ քաշված խնդիրների ուղղությամբ հոգեբանական, մանկավարժական, փիլիսոփայական, մեթոդաբանական բնույթի արդի նվաճումների վերլուծությամբ, գիտափորձերի համակարգված բնույթով, հետազոտության կառուցվածքային բաղադրամասերի գիտականորեն հիմնավորված տրամաբանությամբ, փորձարկվողների անհրաժեշտ քանակով և միջին դպրոցում իրականացվող մայրենիի դասերին ատենախոսի անձնական մասնակցությամբ:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ <u>հայեցակարգային դրույթները՝</u>

1.Ածականի ուսուցումը միջին դպրոցում կարևոր դեր է խաղում աշակերտների բառապաշարի հարստացման և պատկերավոր խոսքի զարգացման գործում:

2. Աշակերտների օգնությամբ հարուստ ու կապակցված խոսք կառուցելու կարողության զարգացմանը միտված աշխատանքները պիտի իրականացվեն բացառապես լեզվական վարժությունների յուրացման միջոցով, գործնական ճանապարհով:

3. Աշակերտի ուսումնասիրման գործընթացում պետք է հենվել ոչ միայն հայոց լեզվի և հայ գրականության, այլև հումանիտար այլ առարկաների դասընթացների՝ պատմության, կրոնի, հայրենագիտության և միջառարկայական այլ կապերի վրա:

4. Դպրոցականների՝ աշակերտներով հարուստ և պատկերավոր խոսք կառուցելու կարողության ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքները չպետք է սահմանափակվեն միայն հիմնական դպրոցի հայոց լեզվի դասագրքերի ընձեռած հնարավորություններով. այն պետք է կրի շարունակական բնույթ՝ աշխատանք իրականացնելով նաև արտադասարանական ընթերցանության միջոցով:

5. Կարևորվում են աշակերտի ուսուցման միջոցով բառապաշարի հարստացման ու խոսքի զարգացման գործընթացին նպաստող մեր կողմից երաշխավորվող մեթոդներն ու հնարները և դրանց գործադրման ուղիները:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունն ու ներդնումն իրականացվել է Երևանի Զոն Կիրակոսյանի անվան թիվ 20, Վահան Թոթովենցի անվան թիվ 57, Կարեն Դեմիրճյանի անվան թիվ 139 և Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի թիվ 2 հիմնական դպրոցների միջին դասարաններում: Ատենախոսությունը քննարկվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց լեզվի ու նրա դասավանդման մեթոդիկայի և ընդհանուր մանկավարժության ամբիոնների ընդլայնված նիստում:

Հոդվածներով հանդես ենք եկել «Մանկավարժական միտք», «Կանթեղ», «Հայագիտական հանդես», «Լեզու և կրթություն» (հավելված «Մանկավարժական միտք» հանդեսի) ամսագրերում:

Ատենախոսության ծավալն ու կառուցվածքը պայմանավորված է ՀՀ ԲՈՀ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող դիդակտիկական և կառուցվածքային պահանջներով: Այն բաղկացած է «Ներածությունից», իրար լրացնող և միմյանց տրամաբանական շարունակություն կազմող երեք գլուխներից, «Եզրակացություններից», «Օգտագործված գրականության ցանկից»:

Ատենախոսության ծավալը համակարգչային 170 էջ է, պարունակում է տարաբնույթ գծապատկերներ և աղյուսակներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է հիմնախնդրի արդիականությունը, ցույց է տրված նրա մշակվածության աստիճանը, որոշվել են նպատակը, հետազոտության օբյեկտը, առարկան, խնդիրները և ձևակերպվել է գիտական
վարկածը: Ներկայացվել են հետազոտության մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, նորույթը, տեսական և գործնական նշանակությունը,

պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության փորձաքննությունն ու կառուցվածքը:

Ատենախոսության **առաջին գլուխը՝ «Ածականի, որպես խոսքի մասի ըմբռնումը մասնագիտական գրականության մեջ, նրա ուսումնասիրման գիտատեսական, մեթոդաբանական և լեզվաբանական հիմունքները»**, բաղկացած է երեք ենթագլուխներից:

1.1 ենթագլխում՝ «Ածականի ըմբռնումը, իմաստավորումը և գնահատումը տեսական-մեթոդական աշխատություններում և դասագրքերում», ներկայացրել ենք ականավոր լեզվաբանների, մանկավարժագետների իմաստաբանական և ձևաբանական տեսություններն ու մոտեցումները (Մ. Աբեղյան, Է. Աղայան, Գ. Ջահուկյան, Ս. Աբրահամյան, Հ. Օհանյան, Լ. Խաչատրյան), մեթոդական հարցերի ուսուցման հայեցակետերը՝ (Ա. Գյուլբուդաղյան, Ա. Տեր-Գրիգորյան, Տ. Շահբազյան, Ա. Ղարիբյան, Է. Աղայան և Հովհ. Բարսեղյան, Ֆ. Խլղաթյան և Լ. Խաչատրյան, Հովհ. Բարսեղյան և Փ. Մեյթիխանյան), որոնք անդրադարձել են ածականի՝ որպես խոսքի մասի քերականական հատկանիշներին, խոսքիմասային առանձնահատկություններին և ուսուցման հարցերին:

1.2 ենթագլխում՝ «Միջին դպրոցում ածականի ուսումնասիրման տեսական, մեթոդաբանական և լեզվաբանական հիմունքները», կարևորել ենք նաև հետազոտության լեզվաբանական հիմունքները՝ որպես մեթոդաբանական հիմք: Այդ տեսակետից իրավամբ կարևորվել է որպես հայոց լեզվի դասի հիմնական նպատակ սովորողների տեսական գիտելիքները գործնականում (կենդանի խոսքում) կիրառելու կարողությունների մշակումը:

Այս ենթագլխում անդրադարձել ենք մեթոդաբանական գիտելիքների կառուցվածքում առանձնացված չորս մակարդակներին՝ **փիլիսոփայական, համագիտական, որոշակիացված-գիտական և տեխնոլոգիական,** և գիտական իմացության տեսությունը համարել ենք մեր հետազոտության մեթոդաբանական հիմք, քանի որ այն որոշում է նրա էությունը, գիտական ուղղվածությունը և օգնում նրա գործնական կիրառմանը:

Գիտական իմացության տեսությունը մեր հետազոտության համար կարող է մեթոդաբանական հիմք ծառայել, եթե սովորողների գործնական աշխատանքներում նպաստի ճանաչողության ձևավորմանը:

1.3 ենթագլխում՝ «Դեռահասի տարիքային, հոգեբանական, անհատական առանձնահատկությունների հաշվառումը որպես ածականի ուսումնասիրման մեթոդաբանական հիմք», մեր հետազոտության համար մեթոդաբանական հիմք ենք համարել միջին դպրոցի աշակերտին ճանաչելը, ուսուցման ընթացքում նրա տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկությունները հաշվի առնելը:

Ատենախոսության **երկրորդ գլուխը՝ «Ածականի տեսակների և կազմության ուսումնասիրումը որպես սովորողների պատկերավոր մտածողության ու բառապաշարի հարստացման միջոց»** բաղկացած է երեք ենթագլխից:

2.1 ենթագլխում՝ «Որակական և հարաբերական ածականների ուսումնասիրումը», անդրադարձել ենք որակական և հարաբերական

ածականների ինչպես ընդհանրություններին, այնպես էլ առանձնահատկություններին ու տարբերակիչ գծերին: Այդ տարբերություններն էլ հիմք են տվել կիրառելու այնպիսի մեթոդներ, որոնք կօգնեն ածականի տեսակների յուրացմանը համապատասխան բովանդակությամբ՝ հեշտացնելով ու մատչելի դարձնելով նրա տեսակների ուսուցման գործընթացը:

Որակական և հարաբերական ածականների ուսուցումը կազմակերպել ենք ԽԻԿ համակարգով:

Դասի առաջին՝ նախապատրաստական կամ **խթանման փուլում** դասն սկսում ենք մի շարք հենակետային հարցերի առաջադրմամբ, հարցեր, որոնք ծառայում են անցած ու անցնելիք նյութերի միջև կապեր հաստատելու նպատակին:

Դասի երկրորդ՝ **իմաստի ընկալման փուլում** անցնում ենք որակական և հարաբերական ածականների ուսուցմանը:

Դասի երրորդ՝ **կշռադատման փուլում** կատարվում են ամփոփիչ առաջադրանքներ՝ կիրառելով Վեննի դիագրամ:

2.2 ենթագլխում՝ «Ածականի համեմատության աստիճանների ուսումնասիրումը միջին դպրոցում», առաջարկել ենք ածականի համեմատության աստիճանների ուսումնասիրումը կազմակերպել «Բանավեճ» և «Գնահատվող բանավեճ» փոխգործուն մեթոդներով:

Տրված մեթոդներով ուսուցման նպատակը ոչ այնքան տրված հարցերի ու դրանց պատասխանների պարզ հերթագայությունն է, որքան խնդրո առարկա հիմնահարցի բուն քննարկումն ու բացահայտումը:

Համեմատության աստիճանների ուսուցման ժամանակ կիրառել ենք նաև **վարժությունների, զրույցի և դիտման մեթոդը**: Վերջինս մանկավարժական երևույթների և գործընթացների նպատակաուղղված և համակարգված ընկալումն ու արձանագրումն է:

Համեմատության աստիճանների ուսուցումը ամփոփելու նպատակով կազմել ենք «Մտքի քարտեզ»:

Այս ենթագլխում օգտվելով ամերիկյան հետազոտողների և պրոֆեսոր Մ. Աստվածատրյանի մեթոդիկայից՝ մոդելավորել ենք լեզուների և մասնավորապես հայոց լեզու դասավանդող ուսուցիչների բնութագրական հատկանիշները:

Կարևորել ենք.

1. բովադակությունը,
2. ստեղծագործական մոտեցումը,
3. հոգածությունը,
4. համագործակցությունը,
5. կառուցողականությունը,
6. փոխկապակցումը,
7. հայեցակարգայնությունը,
8. համատեքստայնությունը (Աստվածատրյան Մ. և ուրիշներ, Երևան, 2003, էջ 73):

2.3 ենթագլխում՝ «Ածականի կազմության ուսումնասիրման գործընթացի մեթոդական առանձնահատկությունները», ներկայացրել ենք

ածականի կազմության տեսական հարցերը և նրա ուսուցման առանձնահատկությունները, որոնք բխում են միջին դպրոցի սովորողի տարիքից, հոգեբանությունից, անհատականությունից և, որ ամենակարևորն է, միջին դպրոցի հայոց լեզվի ծրագրից ու պետական չափորոշիչներից: Ածականի կազմության ուսուցման կազմակերպման և նրա առանձնահատկությունների բացահայտման համար կիրառել ենք **«Վարժությունների կիրառման»** մեթոդը, որը կարող է ունենալ ինչպես անհատական, այնպես էլ համագործակցային բնույթ:

Ածականի կազմության ուսուցման առանձնահատկությունների բացահայտման գործում կարևորում ենք ինչպես որակական ածականներ կերտող նախածանցներն ու վերջածանցները, այնպես էլ հարաբերական ածականներ կերտող ածանցները և բաղադրյալ ածականների բաղադրյալ հիմքերի բառակազմական նշանակությունը: Ուսուցումը կազմակերպելիս օգտվում ենք նաև **«Մրցակցություն»** մեթոդից:

Ածականի կազմության ուսուցման ընթացքում շարունակել ենք սովորողների պատկերացումները հարստացնել առարկա, գործողություն և հատկանիշ հասկացությունների մասին: Ածականի կազմության մասին տրված հասկացությունն ամրապնդելու նպատակով կատարել ենք նաև տարբեր տիպի կիրառական վարժություններ՝ հիմք ընդունելով ոչ միայն ածականը, այլև այլ խոսքի մասերը:

Ածական անվան ուսուցման ներկայացրած մեթոդիկան օգնում է սովորողների բառապաշարը հարստացնելու նախածանցավոր (անուշադիր, ապօրինի, գերիզոր, համարժեք, դժգույն, տկար, չխոսկան, հակադիր) և վերջածանցավոր (փայտե, երկաթյա, հրեղեն, գեղանի, մսալի, հյութալի, յուղալի, բուրավետ, լուսավոր, համեղ, կատաղի, բրդոտ, համով, քնկոտ, սահուն, մտերիմ, ուրախալի, վճարովի, ձուլածո, հանկարծակի) կազմություններով:

Երրորդ գլուխը՝ «Ածականի կիրառության, տարարժեքության ուսումնասիրման մեթոդիկան և դրանց արդյունքների ներդնումը», բաղկացած է չորս ենթագլխից:

3.1 ենթագլխում՝ «Ածականի հոլովման, փոխանունության, որոշչային կիրառության և դրանց ոճական արժեքի ուսումնասիրման մեթոդիկան», անդրադարձել ենք ածականի գոյականաբար գործածությանը: Ածականը գոյականաբար գործածվելիս արտահայտում է թե՛ առարկան, թե՛ նրա հատկանիշը միաժամանակ, այսինքն՝ գոյականաբար գործածված ածականը, ստանալով գոյականի քերականական առանձնահատկությունը, չի զրկվում իր հատկանիշներից (Աբրահամյան Ս. և ուրիշներ, ԳԱ, 2, էջ 136):

Ածականի շարահյուսական գործառույթների կիրառման ուսուցման տեխնոլոգիան մեր կողմից իրականացվել է ԽԻԿ (խթանում, իմաստավորում, կշռադատում) համակարգով:

Այս ենթագլխում անդրադարձել ենք նաև **ածականի մակդրային դերի ուսուցմանը.** գեղարվեստական խոսքում որակական ածականները կարող են ստանձնել խոսքը պատկերավոր, հուզական ու գունեղ դարձնելու գործառույթ, գեղագիտորեն բնութագրել մարդկանց, իրերն ու երևույթները՝

դառնալով մակդիր: Մակդիր դառնալը ածականների ամենակարևոր առանձնահատկություններից մեկն է (Պողոսյան Պ, Երևան 1990, էջ 248):

Քերականական իմաստով, անշուշտ, մակդիրը համընկնում է որոշչին, բայց դրանք նույնացնել չի կարելի, քանի որ, եթե լայն առումով բոլոր մակդիրները որոշիչներ են, ապա բոլոր որոշիչները մակդիրներ չեն:

Մակդիրը, ի տարբերություն որոշչի, տարբերակիչ դեր չունի. մակդիրի համար կարևոր են հեղինակային վերաբերմունքն ու գնահատականը, հուզական երանգավորումն ու խոսքում ձեռք բերած ոճական արժեքը:

Կատարելով կիրառական, ճանաչողական և ամփոփիչ վարժություններ՝ աշակերտները ուսուցչի օգնությամբ փորձում են բնորոշել մակդիրները:

3.2 ենթագլուխը վերնագրված է **«Ածականական դերանունների ուսումնասիրումը»**:

Հայերենի խոսքի մասերի համակարգում դերանունը յուրահատուկ տեղ է գրավում: Դերանվան՝ իբրև առանձին խոսքի մասի հարցում եղել են և կան տարակարծություններ. ոմանք այն տարրալուծում են գոյականների, ածականների և մակբայների միջև: ԿԳՆ-ի ընդունած հայոց լեզվի և գրականության առարկայական ծրագրերի և չափորոշիչների համաձայն՝ 2006 թ.-ին լույս տեսավ «Հայոց լեզու» դասագիրքը (7-րդ դասարան, Խլղաթյան Ֆ., Խաչատրյան Լ.), որտեղ դերանունը տարրալուծվել է հարաբերակից խոսքի մասերի մեջ:

Ածականական դերանունների ուսուցումը կազմակերպել ենք՝ դիմելով փոխարինման հնարին. միաձույլ ամպեր-այսպիսի ամպեր, բաց կապտագույն ամպեր-այսպիսի ամպեր, տխուր էր ու մռայլ-այսպիսին էր և այլն:

Ածականների և դերանունների իմաստային յուրահատկությունները բացատրելու նպատակով կատարել ենք կիրառական վարժություններ:

Լեզվական այդ իրողության ուսուցման ընթացքում կարևորվում է ճանաչողական և ամրապնդող վարժությունների դերը:

3.3 ենթագլխում՝ «Ածական//գոյական և ածական//մակբայ տարարժեք բառերի ուսումնասիրումը», ներկայացրել ենք ածական//գոյական և ածական//մակբայ տարարժեքության ուսուցման մեթոդիկան: Առարկայական չափորոշչի և ծրագրերի համաձայն՝ «նախատեսվում է լեզվական յուրաքանչյուր միավորի ուսումնասիրության ժամանակ ուշադրություն դարձնել նրա գործառական և ոճական արժեքին, համապատասխան վարժությունների միջոցով ամրապնդել դրանց գործնական կիրառությունը խոսքում» (Հայոց լեզու և գրականություն, Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչներ և ծրագրեր, Եր., 2011):

Առաջնորդվելով չափորոշչային այս մոտեցմամբ՝ նշված լեզվական իրողության ուսուցումը մենք արդյունավետ ենք համարել իրականացնել վերլուծական-համադրական մեթոդով՝ առաջնային համարելով սովորողների ակտիվ մասնակցությունը, լեզվական իրողությունների ինքնուրույն վերլուծությունն ու համադրումը, սահմանումների ձևակերպումը:

Տարարժեք բառերի ուսումնասիրումն իրականացվում է որոշակի մեթոդական հնարների միջոցով՝ դրանց բառաքերականական բազմիմաստ նշանակությունները ամբողջական կերպով մատուցելու առումով:

Որո՞նք են գոյական//ածական տարարժեք բառերի ուսումնասիրման գործընթացի փուլերը: Նախքան այդ կարգի բառերի ուսումնասիրմանն անցնելը, լեզվական որոշակի վարժությունների միջոցով սովորողները գաղափար են կազմում դրանց մասին: Միաժամանակ նրանք իմանում են, որ աշխարհաբարի քերականական աշխատություններում տարարժեք բառերի վերաբերյալ արվել են արժեքավոր դիտողություններ, մշակվել են լեզվական այդ իրողության տեսական հարցերը, բացահայտվել նրանց գործառական շրջանակները, ցույց են տրվել առաջացման ուղիները, ձևավորման հիմքերը և այլն: Այս հարցում կարևորվել են ծագումնաբանական գործոնները, խոսքի-մասային փոխանցումները, խոսքի մասերի փոխակերպումը և այլն:

Բնագրային վերլուծական և կիրառական վարժությունների կատարման ճանապարհով աշակերտները համոզվում են, որ խոսքիմասային տարարժեք բառերն ըստ ձևաբանական արժեքների գործառական հաճախականության լինում են՝ ***երկարժեք*** (գոյական//ածական, ածական//մակբայ, մակբայ//կապ) և ***եռարժեք*** համատեղումներով (գոյական//ածական//մակբայ, ածական//մակբայ//կապ) և այլն:

Գոյական//ածական տարարժեք պարզ և ածանցավոր բառերի ուսուցումը կազմակերպել ենք ինդուկտիվ եղանակով, համաձայն որի, մանրազնին ուսումնասիրվում են լեզվական այդ իրողության առանձնահատկությունները, սովորողներն անցնում են որոնողական ճանապարհ, բացահայտում են գայական//ածական տարարժեք բառերի բազմաշերտությունը և կատարում եզրահանգում:

Գոյական//ածական տարարժեք բարդ բառերի ուսուցումը կազմակերպել ենք **«Ուսուցչի խոսք»** մեթոդով (խոսքային-բացատրական մեթոդ):

Խոսքիմասային տարարժեք բառերի ուսուցումն ամրապնդելու նպատակով գործադրվում է նաև ուսուցման համագործակցային եղանակը: Վերջում առաջարկվում է ամփոփիչ վարժություն հաղորդած քերականական իրողության վերաբերյալ:

Ածական//մակբայ տարարժեք բառերի ուսուցումը մատչելի դարձնելու համար դարձյալ առաջարկվում է դրանք խմբավորել ըստ կառուցվածքի և ներկայացնել պարզ, ածանցավոր և բարդ տեսակներով: Նպատակահարմար է գործադրել ուսուցման համագործակցային եղանակը՝ կատարելով խմբային աշխատանքներ, ուսուցման ինդուկտիվ եղանակը՝ կարևորելով տարաբնույթ վարժությունների (կիրառական, ճանաչողական, ամփոփիչ) դերը:

3.4 ենթագլուխը՝ «Հանրակրթության միջին դպրոցում ածականի ուսումնասիրման տեխնոլոգիական առանձնահատկությունները և դրանց կիրառումը փորձարարական աշխատանքներում», նվիրված է փորձարարական դպրոցներում անցկացված մանկավարժական գիտափորձի վերլուծությանը:

Գիտափորձի արդյունավետությանը նպաստել են դիտումը, զուգադրումը, գործնական աշխատանքների վերլուծությունը,

համեմատությունն ու համադրությունը, ստացված արդյունքների մշակումը, ակտիվացնող և փոխներգործող մեթոդները, համագործակցային ուսուցումը:

Գիտափորձին մասնակցել են 7-րդ դասարանի 202 աշակերտ, յուրաքանչյուր դպրոցի փորձարկվող դասարաններում առանձնացվել են երկուական խումբ՝ ստուգիչ և փորձարարական:

Փորձարարական խմբի մեջ ներգրավված են 7-րդ դասարանի 102 աշակերտ, իսկ ստուգողական խմբում՝ 100 աշակերտ:

Գիտափորձն անցկացրել ենք երեք փուլով՝

1. արձանագրող հետազոտություն,
2. ձևավորող հետազոտություն,
3. հավաստող հետազոտություն:

Արձանագրող գիտափորձի ընթացքում, ելնելով հիմնախնդրից, լուծվել են հետևյալ խնդիրները՝

1. ուսումնասիրել և վերլուծել հանրակրթության միջին դպրոցում լեզվական իրողությունների, այդ թվում՝ ածականի ուսուցման գործընթացն ու արդյունքները:

2. Գիտափորձով բացահայտել սովորողների քերականական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հնարավորությունները, ինչպես նաև դեռահասի տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկությունները:

3. Դիտարկել ածական անվան ուսումնասիրման ուղղությամբ առկա և առաջադրվող մեթոդաբանական հիմնախնդիրներն ու ներկայացնել դրանց համեմատական վերլուծությունը:

4. Ապացուցել փորձարկված տեխնոլոգիաների արդյունավետությունը ածական անվան ուսումնասիրման գործընթացում:

5. Փաստել ընտրված տեխնոլոգիաներով իրականացրած ածական անվան ուսումնասիրման արդյունավետությունը և այդ հիմքի վրա սովորողների առաջադիմության շարժընթացը:

6. Իրականացնել մշակված մեթոդական համակարգի փորձագիտական ստուգումը:

Գիտափորձի ընթացքում բացահայտվել և դիտարկվել են նաև մի շարք դիդակտիկական հիմնախնդիրներ: Դրանք են՝

- ավանդական և արդիական մեթոդներով իրականացված աշխատանքի արդյունքների մակարդակներն ու արդյունավետությունը.
- ուսուցիչների վերաբերմունքն իրենց կողմից օգտագործվող ավանդական և նորագույն մեթոդիկաների վերաբերյալ:

Ձևավորող մանկավարժական գիտափորձից առաջ և հետո բոլոր փորձարարական և ստուգողական խմբերում անցկացնել ստուգողական գրավոր աշխատանքներ:

Գիտափորձի ընթացքում ստուգողական առաջադրանքների կատարման արդյունքում որոշվել է սովորողների առաջադիմությունը և ուսման որակը փորձարարական և ստուգողական դասարաններում:

Մանկավարժական գիտափորձի ընթացքում ձևավորվել են չորս ստուգողական և չորս փորձարարական խմբեր:

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձարարական խմբերում ընդգրկվածների միավորները ստուգողական խմբերում ընդգրկվածների համեմատությամբ ավելի բարձր են:

Ըստ առաջադիր խնդիրների, ածականի ուսուցումը կազմակերպվել է «բացատրում – ցուցադրում» մեթոդով, որն ապահովում է լեզվական նյութի յուրացումը՝ պատրաստի գիտելիքների ձեռքբերման ճանապարհով:

Արդյունքը լիարժեք չէր, քանի որ այդ ճանապարհով չէին ձևավորվում ածականի միջոցով բառապաշարի հարստացման և պատկերավոր խոսքի ձևավորման կարողություններ և հմտություններ:

Այնուհետև ածականի կազմության շուրջ աշխատանքն իրականացվել է ռեպրոդուկտիվ-վերարտադրողական մեթոդով: Այդ ընթացքում աշակերտներին առաջադրվող վարժություններն ուղեկցվում էին բացատրական օրինակներով: Նախապես աշակերտները դիտարկում են գործողությունների այն եղանակները, որոնք անհրաժեշտ կլինեն վարժություններ կատարելիս: Ածականն ուսուցանելիս ուսուցիչը սովորողներին տանում է յուրացման բոլոր փուլերով (հաղորդում, լսում, ընկալում, իմաստավորում, ամրապնդում, կիրառում):

Այս մոտեցումը դրական ու արդյունավետ է, բայց ոչ բավարար չափով օգտակար, քանի որ պակասում է ստեղծագործական ընդունակությունների ձևավորումը:

Գիտափորձի մեթոդական ուղղվածության կարևոր մաս են կազմում հարցաթերթիկների տեսքով հարցումները և դրանց վիճակագրական մշակումները.

- Տրված տեքստից դու՛րս գրեք ածականներն իրենց տեսակներով ու համեմատության աստիճաններով:
- Ձեր ցանկությամբ ընտրե՛ք հայ որևէ գրող (ցանկալի է՝ դասական) և նրա ստեղծագործություններից առանձնացրե՛ք ածականներով հարուստ (արձակ, վեպ, պոեմ և բանաստեղծություն) որևէ հատված:
- Որոշե՛ք և գրավոր ներկայացրե՛ք, թե ինչ դեր են խաղում ածականները առանձնացրած տեքստերի մեջ:
- Որոշե՛ք տրված ածականների կազմությունը և բաղադրիչների խոսքիմասային արժեքները:
-Կազմե՛ք նախադասություններ ածականների ուղիղ և փոխաբերական իմաստներով:
- Տրված գոյականների համար ընտրե՛ք համապատասխան ածականներ:
- Ներկայացրե՛ք, թե գեղարվեստական խոսքի որ տեսակում է առավել նպատակահարմար ածականների գործածումը:

Ստացված տվյալները տրվում են համապատասխան վերլուծություններով՝ գծապատկերների տեսքով (գծապատկեր 1, 2, 3, 4, 5):

Փորձարարական խմբի առաջին առաջադրանքի արդյունքները գծապատկերով (№1)

Ստուգողական խմբի առաջին առաջադրանքի արդյունքները գծապատկերով (№2)

Գծապատկեր 1.



Գծապատկեր 2.



Ածականի քերականական կարգերի ուսուցման առաջադիմության մակարդակի դինամիկան փորձարարական և ստուգողական խմբերում (1-ին ստուգողական առաջադրանք)

Փորձարարական խմբի չորրորդ առաջադրանքի (հավաստող փուլ) արդյունքները գծապատկերով (№3)

Ստուգողական խմբի չորրորդ առաջադրանքի (հավաստող փուլ) արդյունքները գծապատկերով (№4)

Գծապատկեր 3.



Գծապատկեր 4.



Ածականի քերականական կարգերի ուսուցման առաջադիմության մակարդակի դինամիկան փորձարարական և ստուգողական խմբերում (4-րդ ստուգողական առաջադրանք)

Գծապատկեր 5-ում ներկայացված է ածականի բառաքերականական կարգերի ուսուցման նպատակով մշակված վարժությունների համակարգի կիրառման արդյունքում ստուգողական և փորձարարական խմբերում գրանցված առաջադիմությունը:

Գծապատկեր 5.



Այսպիսով, փորձարարական խմբերում էական տարբերություններ են արձանագրվում, իսկ ստուգողական խմբերում այդ տարբերությունն առանձնապես մեծ չէ:

Իրականացված փորձարարական աշխատանքների արդյունքները ցույց տվեցին, որ ընդգրկված առաջադրանքների համակարգը նպաստում է սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ստուգմանը և արժեքային համակարգի ձևավորմանը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու հետևյալ հիմնական **եզրակացությունները**.

1. Որպեսզի ածականի ուսուցումը նպաստի աշակերտների բառապաշարի հարստացմանը, խոսքի զարգացմանը և պատկերավոր մտածողությանը, այն պետք է իրականացնել ինդուկտիվ և դեդուկտիվ եղանակներով:
2. Ածական անվան ուսումնասիրումը ձևավորում է գոյական-ածական բառակապակցությունների միջոցով կապակցված խոսք կազմելու կարողություն, ունակություն ու հմտություն, ապահովում է անկաշկանդ հաղորդակցվելու, սեփական հույզերն արտահայտելու կարողություն, հետևաբար նաև՝ միջանձնային հարաբերություններ ստեղծելու հնարավորություններ:
3. Ածականի տեսակների, աստիճանակազմության և ձևակազմության գիտակցական յուրացումը խորացնում է ոչ միայն սովորողների տեսական գիտելիքները, այլև բացահայտում է բառակազմության բազմատեսակ դրսևորումները հայերենի բառակազմության միջակա մակարդակում:
4. Ածականի ձևաբանական տարարժեքության ուսումնասիրումը հնարավորություն է տալիս գիտակցելու ածականի խոսքիմասային առնչությունները հարաբերակից խոսքի մասերի՝ գոյականի և մակբայի հետ՝ նպաստելով խոսքում այդ կարգի բառերի ճիշտ արժևորմանը, որի արդյունքում աշակերտները յուրացնում են նաև տեսական հարցեր. ածականների

ձևաբանական արժեքի բաշխումը կատարվում է նաև շարահյուսական մակարդակում:

5. Ածականի գործառույթների ուսուցումը նպաստում է գեղարվեստական խոսք կառուցելու օրինաչափությունների յուրացմանը, ցույց տալիս նրա պաշտոնակրությունը շարահյուսական մակարդակում:
6. Ածականի յուրացման մակարդակի ստուգմանն ուղղված գիտափորձը հաստատում է առաջարկվող սկզբունքների հավաստիությունն ու դրանց գործադրման արդյունավետությունը:
7. Ածականի, մասնավորապես ածական+գոյական բառակապակցությունների ուսուցմամբ բացահայտվում է լեզվական համակարգի վերացարկվածության աստիճանը. լեզվում արձանագրված ածականները և գոյականները արտացոլում են բնության մեջ ինքնին գոյություն ունեցող առարկաների և դրանց հատկանիշների կապերը:
8. Ածականի, նրա հատկանիշների ուսուցմանն ուղղված վարժությունների համակարգն իր տարատեսակ դրսևորումներով կարող է նպաստել այդ խոսքի մասի համակողմանի ուսուցմանը, օգնել նրա յուրացման գործընթացին և նյութ մատուցել հանրակրթության եռաստիճան համակարգում ածականի ուսուցման մեթոդական ձեռնարկներին:
9. Ածականի ուսուցման արդյունավետությունն ապացուցվել է արձանագրող գիտափորձով, որին նպաստել են դիտումը, զուգադրումը, գործնական աշխատանքների վերլուծությունները, համեմատությունն ու համադրությունը, ստացված արդյունքների մշակումը, ակտիվացնող և փոխներգործող մեթոդները, համագործակցային ուսուցումը և այլն:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Խաչատրյան Ս. Ռ., Ածականի ուսուցման առաջին դասը, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», N 3(6), Երևան, 2007, էջ 25-32:
2. Խաչատրյան Ս. Ռ., Ածականական դերանունների ուսուցումը, «Կանթեղ» (գիտական հոդվածների ժողովածու), N 1(34), Երևան, 2008, էջ 52-59:
3. Խաչատրյան Ս. Ռ., Գոյական//ածական տարարժեք բառերի ուսուցումը միջին դպրոցում, «Մանկավարժական միտք» հանդես, N 4, Երևան, 2008, էջ 140-148:
4. Խաչատրյան Ս. Ռ., Ածական//մակբայ տարարժեք բառերի ուսուցումը, «Հայագիտական հանդես», N 2-3(8-9), Երևան, 2008, էջ 48-57:

5. Խաչատրյան Ս. Ռ., Աձականի տեսակների ուսուցումը հիմնական դպրոցում, «Լեզու և կրթություն 3» Հավելված «Մանկավարժական միտք» հանդեսի, Երևան, 2012, էջ 100-106:

ХАЧАТРЯН СИРАРПИ РУБИКОВНА

ОБУЧЕБИЕ ЛЕКСИКО-ГРАММАТИЧЕСКИМ КАТЕГОРИЯМ ПРИЛАГАТЕЛЬНОГО В СРЕДНЕЙ ШКОЛЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - “Методика преподавания и воспитания” (армянский язык).

Защита диссертации состоится 05.06.2014 г. в 14^{00} на заседании специализированного совета по педагогике 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меци 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Развитие отраслей современной науки, культурной жизни, межнациональных, общественно-политических отношений влияет на процесс совершенствования языковой системы, приводит к необходимости ее обогащения. В этом плане подчеркивается значение обучения прилагательному в средней школе.

Выразительная гибкая речь, наделенная позитивными эмоциями, основном проявляется в результате атрибутивного использования прилагательного, помогая человеку создать благоприятные взаимоотношения с окружающими людьми, решить различные проблемы, а также защитить свои первоочередные интересы и интересы окружающих.

Целью исследования является разработка целостной эффективной методической системы, которая будет способствовать обучению прилагательному как части речи, сознательному, более логическому усвоению материала, формированию образного мышления учащихся, обогащению их словарного запаса, развитию навыков построения письменной и устной речи.

Задачи исследования.

1. определить место и роль прилагательного в речи учащихся;
2. предложить им новые методы обучения, в плане определения роли прилагательного среди различных частей речи;
3. раскрыть этапы последовательного обучения, подчеркивая место и роль прилагательного в процессе изучения разных разделов языка;
4. разработать оптимальные методы обучения прилагательному, которые будут способствовать обогащению словарного запаса учащихся и развитию выразительной речи;

5. установить процедуры построения связной речи с использованием прилагательного в цепи: слово-словосочетание-предложение-связная речь;

6. предложить систему упражнений, которая будет способствовать усвоению темы;

7. осуществить эксперимент, подтверждающий достоверность конкретной предложенной методической системы в разных школах республики.

Научная новизна исследования.

1. С целью обогащения словарного запаса учащихся и развития выразительности их речи нами выявлены практические возможности обучения прилагательному с использованием новых интерактивных методов в системе обучения армянскому языку.

2. Использованы новые методы в процессе раскрытия типов прилагательного, обучению составления степеней и разработки методической системы обучения морфологической полисемантичности.

3. В систему обучения прилагательному внедрен и нашел практическое применение дидактический принцип “от педагогики требований к педагогике взаимоотношений”.

4. Разработана стратегия обучения прилагательному, а также методическая система обучения и закрепления учебного материала.

Теоретическое значение

В процессе исторического развития языка произошли сдвиги морфологических значений, в том числе частей речи конверсии, в результате чего образовались прилагательное/наречие и прилагательное-существительное полисемантичные слова и обучение им. Изучение грамматической реальности может подтверждает научное описание полисемантичных частей речи.

Практическое значение исследования.

Диссертация содержит ориентировочные материалы и требования, которые могут быть использованы учителями армянского языка средней школы и студентами филологических факультетов вузов Армении, а также преподавателями, ведущими теоретические и практические занятия по армянскому языку.

Апробация результатов исследования.

Достоверность результатов исследования обеспечена методологическим обоснованием исходных положений; применением комплекса методов, адекватных целям и задачам исследования; анализом специальной литературы по избранной проблеме; репрезентативностью экспериментальных данных и анкетных методик; сочетанием количественного и качественного анализа материала; возможностью повторения экспериментальной программы.

Основные положения диссертации были обсуждены на различных этапах эксперимента на расширенном заседании кафедр армянского

языка и методики его преподавания и общей педагогики АГПУ им. Х. Абовяна. Материалы исследования внедрены в практику преподавания армянского языка в средней школе РА.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложений.

По теме диссертации опубликовано 5 статей.

SIRARPI RUBIK KHACHATRYAN

TEACHING LEXICAL AND SEMANTIC CATEGORIES OF THE ADJECTIVE IN THE SECONDARY SCHOOL

The dissertation for awarding the academic degree of candidate of pedagogical sciences on the specialty 13.00.02 - “Methods of Teaching and Educating”(the Armenian Language).

The defense will be performed at 14^{00} on 05.06.2014 at the Specialized Council on Pedagogy 020 of SAC of RA for awarding academic degrees at Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan: 0010, 17 Tigran Mets, Yerevan.

SUMMARY

The relevance of the research paper. The development of various branches of modern science, intercultural communication and socio-political relations affect the process of improving the linguistic system and lead to the necessity of its enrichment. In the framework of all the global changes that the contemporary world faces, nowadays the significance of teaching and learning languages has become more than actual and vital. Within the context of language education teaching of adjective in secondary school is being emphasized, as it gives the learners the opportunity to become more creative in the use of the language.

Flexible expressive speech, endowed with positive emotions, is mainly manifesting itself as a result of the use of the attributive use of the adjective which helps people to develop favorable relationships with others, solve various problems as well as protect their interests and priorities of others.

The aim of the research is to develop an integrated methodological system that will facilitate learning adjective as a part of speech, more conscious and logical assimilation of the teaching material, the formation of creative thinking of students and enrichment of their vocabulary, development of the skills for constructing written and spoken language.

To achieve the goal of the research the following **objectives** are set forth:

1. Determine the place and role of the adjective in the frame of parts of speech of learners;

2.Offer them new teaching methods in regard with the role of the adjective in the range of different parts of speech;

3.Disclose the steps of consecutive teaching of adjective while learning other parts of speech;

4.Select the optimal methods of teaching adjective that will enrich the students' vocabulary and foster the development of the expressiveness of the speech of the learners;

5.Establish procedures for constructing coherent speech using the adjective in the chain: the word - phrase - sentence - connected speech;

6.Propose a system of exercises that will promote the absorption of the theme;

7.Carry out the experiment which prove the accuracy of a proposed methodological system in different secondary schools of Armenia.

The novelty of the research.

1. The practical opportunities of teaching Adjective with the use of interactive methods of teaching the Armenian language have been identified and elaborated which may significantly contribute to the improvement of the language vocabulary of the learners and the development of the expressiveness of their speech.

2. The new methods have been used for revealing the types of adjectives, learning the degrees of comparison, developing the methodological system for teaching the morphological polysemy.

3. The didactic principle “from pedagogy of requirements to the pedagogy of relationships” has been implemented and found its practical application in the system of teaching adjective in secondary schools.

4. The strategy of teaching adjective has been elaborated as well as the methodological system of training and retention of teaching material has been worked out in this thesis paper.

The theoretical value of the research

In the course of historical development the shifts of morphological meanings have taken place, including parts of speech and conversion which have resulted in the formation of adjective-adverb and adjective-noun as well as polysemantic words. The study of grammatical reality justifies the scientific description of polysemantic parts of speech.

The practical value of the research

The thesis contains indicative materials and requirements which may be used by teachers of the Armenian language in secondary schools and by the students of philological departments of higher

education institutions in Armenia, as well as teachers of theoretical and practical courses in the Armenian language.

Testing the results of the research

The reliability of the results of the research is provided by the methodological proof of the basic assumptions, the use of the set of methods which are cohesive with the goal and the objectives of the paper, analysis of special literature on the topic, introduction of the results of the experiment and the data on the questionnaire, combination of quantitative and qualitative analysis of the material.

The key provisions of the thesis paper have been discussed at various stages of the experiment at the expanded joint sessions of the chairs of the Armenian language and methods of its teaching and General Pedagogy of ASPU named after Abovyan. The results of the study have been implemented into practice in the context of teaching of the Armenian language in high school of the Republic of Armenia.

The content of the study is reflected in the structure of the dissertation, which consists of Introduction, three Chapters, Conclusion, Bibliography and Appendices. Five published articles cover the topic of our dissertation paper.